Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 29 նոյեմբերի 2023 թվականի թիվ 45, Վանաձոր համայնքի ղեկավարի 23 հունվարի 2024 թվականի թիվ 162 որոշումները, համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի հողամասն աճուրդով վաճառելու մասին 26 փետրվարի 2024 թվականի թիվ 1/2-12 արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ.

1.Ղ. Աղայան փողոց, 97/1՝ 0,00408հա մակերեսով, 06-001-0711-0022 ծածկագրով, թիվ 05032024-06-0019 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող հողամասը, հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման համար, 190287 (հարյուր իննսուն հազար երկու հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամով օտարել 2024 թվականի փետրվարի 26-ին Վանաձորի համայնքապետարանում անցկացված աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված Լիլիթ Յոլչյանին:

2.Լիլիթ Յոլչյանի հետ տասներկուսուրյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 06
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 մարտի 2024 թվականի N 643

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂ ԹԻՎ 2Դ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Խաչիկի Մելքոնյանի 12.02.2024 թվականի թիվ 3038 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1855136 վկայականը, 09.02.2024թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 715 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ:741-20240209-2-7685832), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/147838/, 06.02.2024թ. ՀՀ կադաստրի կոմիտեի թիվ ՄՏ-06022024-06-0370 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Շիրակացու փող 2դ հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Շիրակացու փողոց, 2/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 06
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 մարտի 2024 թվականի N 644

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂ ԹԻՎ 2Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՏԱՂԱՎԱՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Խաչիկի Մելքոնյանի 12.02.2024 թվականի թիվ 3037 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1906095 վկայականը, 09.02.2024 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 716 պայմանագիրը /նոտարական ակտի կոդ:741-20240209-2-7685824/ անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/147836/, 06.02.2024թ. ՀՀ կադաստրի կոմիտեի թիվ ՄՏ-06022024-06-0153 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Շիրակացու փող 2գ հասցեում գտնվող տաղավարին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Շիրակացու փողոց, 2/2 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 06
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 մարտի 2024 թվականի N 645

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի «ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1772 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 1772 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2024թ. մարտի 06
ք. Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 մարտի 2024 թվականի N 646

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՀՈՒՆԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 855
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոնա Կամոյի Առաքելյանի (ծնված՝ 06.05.1993թ.) 26.12.2023թ. թիվ 02/23219 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 26 հունիսի 2023 թվականի թիվ 855 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 25.08.2023թ. թիվ Կ-25082023-06-0027 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի ղեկավարի 26 հունիսի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 1 փողոց թիվ 7 հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Սոնա Կամոյի Առաքելյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 855 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման նախաբանում՝ «կից 65.1» բառերը փոխարինել՝ «կից 70.6» բառերով, «332.4:» թիվը փոխարինել՝ «675.8,» թվով, և «675.8,» թվից հետո ավելացնել՝ «որը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև հավասար բաժիններով: Սոնա Կամոյի Առաքելյանին պատկանող հողամասի մակերեսը կազմում է 337.9(675.8:2) քմ: «Ղեկավարվելով» բառից հետո ավելացնել՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով,» բառերը:

2. Որոշման 1-ին կետի «կից 65.1» բառերը փոխարինել՝ «կից 70.6» բառերով, «նկատմամբ» բառից հետո նոր պարբերությունից լրացնել՝ «Հողամասի ընդհանուր մակերեսը փաստացի կազմում է 675.8քմ, որը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն Վանաձոր համայնք Վանաձոր ք. Խնձորուտ թաղամաս 1 փողոց թիվ 7, և Վանաձոր համայնք Վանաձոր ք. Խնձորուտ թաղամաս 1 փողոց թիվ 7/1 հասցեների տնատիրությունների միջև: Սոնա Կամոյի Առաքելյանի բաժնեմասը կազմում է հողամասի 1/2 մասը, այսինքն՝ 337.9(675.8:2) քմ մակերեսով հողամաս:» բառերով:

3. Որոշման 2-րդ կետի «332.4» թիվը փոխարինել՝ «337.9» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 06
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 647

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 2005 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և
«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային
կարգապահական ներքին կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 28 սեպտեմբերի 2021
թվականի «Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային
կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու և Վանաձորի քաղաքային համայնքի
ղեկավարի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1461-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու
մասին» թիվ 2005 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 648

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԶԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8/4 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ)
ՀԱՍՅԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
ԽԱՌԱՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանո Հարությունի Խառատյանի (ծնված՝ 04.04.1955թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 01.12.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-448/23 Ի եզրակացությունը, 20.11.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023QEWFYF), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունն ու տեղագրական հատակագիծը, 12.07.2023թ. թիվ 4879 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20230712-66-7099123), Բաժանորդի էպիկրիզը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Զ.Անդրանիկի փողոց թիվ 8/4 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 303.2քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ.-ին և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 303.2քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Վանո Հարությունի Խառատյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Զ.Անդրանիկի փողոց թիվ 8/4 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի

տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 303.2քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2.Փոխել Վանաձոր քաղաքի Զ.Անդրանիկի փողոց թիվ 8/4 (պայմանական) հասցեում գտնվող 0.03032հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Վանաձոր քաղաքի Զ.Անդրանիկի փողոց թիվ 8/4 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Սպորտային փողոց, 1/8 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 649

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0093-0005) ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Միշայի Մարությանի լիազորված անձ Ազատ Արտաշի Քոչինյանի (ծնված՝ 22.09.1973թ.) 12.02.2024թ. թիվ 02/3040 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1742691 վկայականը, 20.07.2022թ. տրված թիվ 3300 (նոտարական ակտի կոդ: 741-20220720-79-6096534) լիազորագիրը, 02.05.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1827 (նոտարական ակտի կոդ: 741-20230428-84-6882648) վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ (145518) քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով **որոշում եմ՝**

Վանաձոր համայնք, գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0093-0005) գտնվող տնամերձին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 7-րդ փողոց, 9 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 650

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11/49 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԱՆ ԶԱՎԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Զավենի Գրիգորյանի 21.06.2023թ. թիվ 10174 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05022024-06-0001 վկայականը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց 11/49 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 30.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 26.22քմ) ավտոտնակը 99070 (իննսունինը հազար յոթանասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 31.0քմ մակերեսով հողամասը 501480 (հինգ հարյուր մեկ հազար չորս հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արման Զավենի Գրիգորյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արման Զավենի Գրիգորյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 651

ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 29/4
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ՌՈՄԵԼԱ ՄԱԹԵՎՈՍԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոմելա Մաթևոսի Սարուխանյանի դիմումը, 26.04.2023 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01022024-06-0089 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի բ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ**.

1. Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց 29/4 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 6.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 1.4քմ) խանութը 166770 (հարյուր վաթսուներեց հազար յոթ հարյուր յոթանասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 6.8քմ մակերեսով հողամասը 71500 (յոթանասունմեկ հազար հինգ հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ռոմելա Մաթևոսի Սարուխանյանին:

3. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Ռոմելա Մաթևոսի Սարուխանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 6.8 քմ մակերեսով հողամասի և 6.8քմ արտաքին մակերեսով խանութի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 652

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐՔԱՆՑՔ 7/44
ՀԱՄԱՅՆՔԻ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՈՀԱՐ
ՕՆԻԿԻ ՂԱՐԻՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհար Օնիկի Ղարիբյանի (ծնված՝ 09.03.1951թ.) 16.05.2022թ. թիվ 3825 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15022024-06-0028 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ որոշում եմ.

1. Վանաձոր քաղաքի Հ. Ներսիսյան փողոց 1-ին նրբանցք 7/44 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 64.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը 56.12քմ) ավտոտնակը 127010 (հարյուր քսանյոթ հազար տաս) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 36.2քմ մակերեսով հողամասը 160800 (հարյուր վաթսուց հազար ութ հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Գոհար Օնիկի Ղարիբյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Գոհար Օնիկի Ղարիբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 653

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 10 ՇԵՆՔ, 1
ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սմբատ Սերգեյի Բեջանյանի (ծնված՝ 15.09.1971թ.) լիազորված անձ՝ Անահիտ Սերգեյի Բեջանյանի 15.02.2024 թվականի թիվ 02/3344 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1857955 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը՝ 146177, 20.11.2023թ. տրված թիվ 6546 (նոտարական ակտի կոդ: 741-20231120-90-7483415) լիազորագիրը, 29.01.2024թ. տրված թիվ 305 (նոտարական ակտի կոդ: 843-20240120-4-7632582) անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**

Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում գտնվող 10 շենք, 1 բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Գուգարք գյուղ, Էներգետիկների 5-րդ փողոց, 10 շենք, 1 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 654

ՅՈՒՐԱ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 77 ՇԵՆՔԻ
ԴԻՄԱՑ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով 2023թ. նոյեմբերի 13 - ին հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 08.02.2024 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա թիվ 77 շենքի դիմաց կատարված շինարարական օբյեկտին բարեկարգման նպատակով, առանց կառուցապատման իրավունքի օգտագործման, տրամադրված 5,87 քմ հողամասում շինարարական աշխատանքներ ծավալելու:

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 24.01.2024թ.թիվ ՔՏՄ/19.2/2671-24 գրության՝ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա թիվ 77/1-1 դեղատուն հասցեում այգու կողմից 5,87 քմ համայնքային պատկանող հողատարածքի վրա իրականացվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ:

2024թ. փետրվարի 8- ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի փետրվարի 21-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է Տիգրան Մեծ պողոտա 77/1-1 շենքի սեփականատեր՝ Յուրա Վազգենի Գալստյանը (բնակվող քաղաք Վանաձոր, Նիզամի փողոց 55/3): Լսումների ընթացքում Յու.Գալստյանը հայտնել է, որ Տիգրան Մեծ պողոտա 77/1-1 շենքի կից տարածքում իրականացնում է բարեկարգման աշխատանքներ, որի համար Վանաձորի համայնքապետարանից ունի համապատասխան թույլտվություն:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի խնդիրներն են՝ գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը:

Յուրաքանչյուր դեպքում վարչական իրավախախտման գործ քննելիս վարչական մարմինը պարտավոր է պարզել կատարվել է արդյոք վարչական իրավախախտում, արդյոք անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության:

Վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը պարտավոր է ապահովել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Այդ հանգամանքները հաստատվում են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների հիման վրա, որոնք են ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատվում է վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Յուրա Վազգենի Գալստյանի կողմից Տիգրան Մեծ պողոտա 77/1-1 հասցեում իրականացրած շինարարական աշխատանքների փաստով հարուցված վարչական վարույթը եզրափակել՝ վարչական իրավախախտման հիմքի բացակայության պատճառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 655

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-031-0014-0011) ԲՆԱԿԵԼԻ ՔՈԹԵՋԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ավարդ Սերգեյի Հակոբյանի 19.02.2024 թվականի թիվ 02/3577 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1871008 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը՝ 146589, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով **որոշում եմ**.

Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում գտնվող (ծածկագիր՝ 06-031-0014-0011) բնակելի քոթեջին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, Քոթեջային 1-ին փողոց, 3 շենք, 2 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 656

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 14 ՓՈՂՈՑ, 24
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Արմենակի Մարկոսյանի լիազորված անձ՝ Նորիկ Վահանի Վարդանյանի 26.01.2024 թվականի թիվ 02/1768 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը՝ 143055, 07.12.2023թ. տրված թիվ 9637 (նոտարական ակտի կոդ: 763-20231207-79-7531503) լիազորագիրը, <<ՏԱՐՈՆ ԱՐՏՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ>> Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, 28.12.2023 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքներ (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագրեր: 2023REQRYX, 2023QNZLMD), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում գտնվող 14 փողոց, 24 բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 14-րդ փողոց, 32/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 657

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Սաքանյանի դիմումը, Գուգարք համայնքի ղեկավարի 07 հուլիսի 2020 թվականի թիվ 9 շինարարության թույլտվությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

Գուգարք համայնքի ղեկավարի 07 հուլիսի 2020 թվականի թիվ 9 շինարարության թույլտվության մեջ «12,2x11,1» թվերը փոխարինել «12,97x13,05» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 658

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/6-
2 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /142177/, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 34 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

- Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Գ. Նարեկացու փողոց թիվ 2/6-2 հասցեին կից գտնվող 0.009հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
- Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 2/10 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2024թ. մարտի 07
ք.Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 659

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
126 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 22 հունվարի 2024 թվականի թիվ 126 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի ղեկավարի 22 հունվարի 2024 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 24 փետրվարի 2023 թվականի թիվ 410 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 126 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. Որոշման 2-րդ կետում «կառուցապատման գոտում» բառերից հետո լրացնել «և Վանաձոր համայնքի ղեկավարի 24.02.2023թ. թիվ 410 որոշման մեջ գրվել է սխալմամբ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 660

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՔԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ 14 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ
ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Վանաձոր համայնքի Զաքարյան փողոցի հյուսիսային հատվածում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա առանց շինարարության թույլտվության ինքնակամ կառուցվել է մետաղական ավտոտնակ, ուստի անհրաժեշտություն է առաջացել քանդել (ապամոնտաժել) վերոգրյալ հասցեում գտնվող ինքնակամ շինությունը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի բ) կետի՝ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 26.01.2024 թվականին գրվել է զեկուցագիր և արձանագրություն Վանաձոր համայնքի Զաքարյան 14 հասցեի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված ավտոտնակի, կառուցված Գոռ Ղարազյոզյանի կողմից (հասցե՝ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Զաքարյան փողոց, 14 շենք, 23 բնակարան) և ինքնակամ կառուցված գետնափոր մառանի, կառուցված Սմբատ Մալումյանի կողմից (հասցե՝ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Զաքարյան փողոց, 14 շենք, 33 բնակարան) փաստով:

2024 թվականի հունվարի 26-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի փետրվարի 5-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել են Գոռ Ղարազյոզյանը և Սմբատ Մալումյանը:

Վարույթի լսումների ընթացքում Գոռ Ղարազյոզյանը հայտնեց, որ 29 փետրվարի 2023 թվականին Վանաձորի համայնքապետարան դիմում է ներկայացրել (մտից թիվ 02/5033) Զաքարյան փողոցի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված մետաղական, ոչ հիմնական շինության, ավտոտնակի օրինականացման համար, իսկ Սմբատ Մալումյանը հայտնել է, որ

Զաքարյան փողոցի 14 հասցեի հյուսիսային մասում 1977 թվականից ինքնակամ կառուցել և օգտագործում է գետնափոր մառան, որը օրինականացման համար 2024 թվականի ապրիլի 1-ին դիմում է ներկայացրել Վանաձորի համայնքապետարան (մտից թիվ 02/5027):

Գոռ Ղարազյոզյանի կողմից ինքնակամ կառուցած ավտոտնակը չափագրվել է 13 ապրիլի 2023 թվականին «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից իսկ Սմբատ Մալումյանի գետնափոր մառանը չափագրվել է 29 նոյեմբերի 2023 թվականին «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից որի արդյունքում պարզվել է, որ ավտոտնակի և մառանի զբաղեցրած հողամասերը համադրվում են, ինչը հնարավորություն չի տալիս օրինականացնելու նշված մետաղական ավտոտնակը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն՝ գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք սույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխան պարտավոր է ներկայացնել դիմողը, և վարչական մարմնի մնացած ժամկետում հնարավոր չէր ըստ էության որոշում ընդունել:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝ վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 10 օրով՝ մինչև 7 մարտի 2024 թվականը:

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վանաձոր համայնքի Զաքարյան 14 հասցեի հյուսիսային հատվածում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա առանց շինարարության թույլտվության ինքնակամ կառուցվել է մետաղական ավտոտնակ, ուստի անհրաժեշտություն է առաջացել քանդել (ապամոնտաժել) վերոգրյալ հասցեում գտնվող ինքնակամ շինությունը:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող Կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառույցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող

ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը: Վերը նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Համաձայն հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքներն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի՝ լուումներ չեն անցկացվում, եթե անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, «Տեղական

ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները:

Որոշեցի

1. Զօրինականացնել Վանաձոր համայնքի Զաքարյան 14 հասցեի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակը:

2. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի «Վանաձորի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի և իրավապահ մարմինների օժանդակությամբ ապամոնտաժել Վանաձոր համայնքի Զաքարյան 14 հասցեի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակը:

3. Առաջարկել ՀՀ ոստիկանությանը Վանաձորի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

4. Վանաձորի համայնքապետի որոշմամբ նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ կառույցն իրականացրած անձից:

5. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձորի համայնքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Վանաձորի համայնքապետարանի ղեկավարը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 07
ք. Վանաձոր